RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2023

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2023 թ. Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: 2022թ համար օգտագործվել են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները:

Զուտ շահույթ

- **2023** թվականի ընթացքում Հայաստանում գործող 18 բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **230 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **32.5 ՀՀ մլրդ** կամ **12%-**ով պակա**դրամով**ս է քան **2022** թվականի ընթացքում գրանցած արդյունքը:

- Նշված նվազումը հիմնականում պայմանավորված է Արցախի շուրջ տեղի ունեցած իրադարձություններով:

Բանկերի զուտ շահույթը - 2023 / 2022 (մլն ՀՀ դրամ)



ROAE

- Բանկային համակարգի ROAE ցուցանիշը 2023 թվականի ընթացքում կազմել է **16.5%:**
- Ամենաբարձր ROAE գրանցել է Արդշինբանկը – **37.2%:**

TOP 10 - Զուտ շահույթ/ընդհանուր կապիտալ միջին հարաբերակցության (ROAE) համեմատական 2023/2022 թթ.



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2023թ. աճել են **801 մլրդ ՀՀ դրամով,** կամ **9.5%**:

- Առ 31.12.2023, ընդհանուր ակտիվները կազմել են **9.194 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.12.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱՄԻՈ ԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **57.1%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ԱՄԻՈ ԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.1%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.8%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.23



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2023թ. ընթացքում աճել է **21%**-ով:
- Առ 31.12.2023 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **5.036 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **55%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 12 ամիսներ 2023 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ԱԿԲԱ ԲԱՆԿ, *ԱՄԻՈ ԲԱՆԿ,* եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.2%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ *ԱԿԲԱ ԲԱՆԿ*) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **43.7%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **19.6%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.12.23



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2023թ. ընթացքում աճել են **627 մլրդ ՀՀ դրամով,** կամ **9%:**

- Առ 31.12.2023, ընդհանուր պարտավորությունները կազմել են **7.708 մլրդ ՀՀ**:

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 31.12.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2023թ. աճել են **443 մլրդ ՀՀ դրամով,** կամ **9%**:
- Առ 31.12.2023, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **5.505 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **71%:**

Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ
- 31.12.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2023թ. ընթացքում **75 մլրդ ՀՀ դրամով,** կամ **22**%-ով և կազմել է առ 31.12.2023 շուրջ **421 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.12.23 և 31.12.22
(մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2023թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **174 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13%** ու կազմել **1.484 մլրդ ՀՀ դրամ**:
- *Այս աճը հիմնականում պայմանավորված է կուտակված շահույթի աճով, որը կազմել* **145 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 31.12.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.12.2023թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **50%**-ը և հավասար է **737 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.12.2023թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **48**%-ը և հավասար է **719 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.12.2023թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **2%**-ը և հավասար են **23 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.12.2023



Կուտակված շահույթ (վնաս)

- 2023թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **145 մլրդ ՀՀ դրամով**, կամ **25%,** կազմելով **719 մլրդ ՀՀ դրամ**:

- 2023թ. ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **11** բանկ՝ընդհանուր գումարով **87 մլրդ ՀՀ դրամ**

1. Ամերիաբանկ	***23** մլրդ ՀՀ դրամ*
2. Արդշինբանկ	***18.1** մլրդ ՀՀ դրամ*
3. Ինեկոբանկ	***13** մլրդ ՀՀ դրամ*
4. ԱյԴի Բանկ	***7.8** մլրդ ՀՀ դրամ*
5. Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան	***5.8** մլրդ ՀՀ դրամ*
6. ԱրարատԲանկ	***5** մլրդ ՀՀ դրամ*
7. Կոնվերս Բանկ	***4.4** մլրդ ՀՀ դրամ*
8. ԱԿԲԱ Բանկ	***4.4** մլրդ ՀՀ դրամ*
9. Էվոկաբանկ	***3.44** մլրդ ՀՀ դրամ*
10.ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	***1.2** մլրդ ՀՀ դրամ*
11.Յունիբանկ	***0.52** մլրդ ՀՀ դրամ*

RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am